# ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01

**ք. Երևան** **22 հունվարի 2015թ.**

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանի, որը գործում է ակադեմիայի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Կ. Մինասյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» 18 դեկտեմբերի 2014թ. ՀՕ-192-Ն ՀՀ օրենքով և 21 հունվարի 2015թ.-ին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Պատվիրատուի միջև կնքված «ՀՀ պետական բյուջեի «Գրադարանային ծառայություններ» ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ» հ.1/Գ պայմանագրով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

*1.1* Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ՀՀ պետական բյուջեի *«Գրադարանային ծառայություններ» ծրագրի* շրջանակներում «ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից գրադարանային ծառայությունների իրականացման պարտավորությունները:

## 2 Պայմանագրի գինը

*2.1* Սույն պայմանագրի գինը կազմում է 133 313.4 (Մեկ հարյուր երեսուներեք միլիոն երեք հարյուր տասներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

*2.2* Պատվիրատուն Կատարողի կողմից ստանձնված պարտավորությունների իրականացման սուբսիդավորումը իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

## 3 Աջակցությունը տրամադրելու և ծախսելու կարգը

*3.1* Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

*3.2* Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

*3.3* Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

## 4 Հաշվետվությունը

*4.1* Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5 Այլ դրույթներ

*5.1* Սույն պայմանգիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*5.2* Սույն պայմանգրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

*5.3* Սույն պայմանագիրը կնքված է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին և ԿԳՆ գիտության պետական կոմիտեին տրվում է մեկական օրինակ:

## 6 Կողմերի իրավաբանական հասցեները

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան ՊՈԱԿ |
| Հասցե ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24 | Հասցե ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24դ |
| Բանկային տվյալներ Արարատբանկ ԲԲԸ | Բանկային տվյալներ Հայէկոնոմբանկ |
| Հ/Հ 1510005175820100 | Հ/հ 163008105039 |
| ՀՎՀՀ 00005673 | ՀՎՀՀ 00009631 |
| Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան | Տնօրեն՝ Կ. Մինասյան |
| ---------- | ---------- |
| ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |